

տկար ըլլար եւ հզօր գիտակցութիւն մ'ունենար. բանիր որ միանգամայն միասին կրնան ըլլալ: Զանի թագաւորական խաղ կ'անուանեն, եւ թէսեն թէ հնարուած է թագաւորի մը համար, կ'ըսեն ծովական ծովով մը վարձատրեր է հնարուով: Եթէ սաոյգ է ասիկա, կարծես թէ ես զինք կը տեսնեմ: Խելքով կամ տարիքով փոքր զինք կը տեսնեմ:

Ատրլ. — Զիս այնքան քիչ կը ճանշնաք կամ այնքան փնքը էք, չզիտնալու համար, թէ ինչ պիսի ծեռով պէտք է իմ մասիս Ուայզլինզին էն իսոսիր:

Լիրետ. — Լորամարգիի մը եղանակով կը խորհիմ:

Ատրլ. — Երբեք խելք պիսի չսորմիք:

Լիրետ. — Խելքը կարելի է սորմիւ, յար գելի տիկին:

Եպս. — Գացէք, գացէք: Ամենալաւ ծին առ էք ախոռէս, ընտրեցէք ծեր զինուորները և զինքը ինծի բերէք:

Լիրետ. — Եթէ իմ հմայքս չզօրէ զինք հոս բերել, ըսէք թէ պառաւ մը, որ կոծիծնիր իւ մորթաբիծեր կը մաքրէ՝ ինծմէ աւելի լաւ կը հասկնայ համակրութենէն:

Եպս. — Ի՞նչ օգուտ ունի ասիկա: Պերլիւին զըն ամբողջովին զրաւած է զինքը: Եթէ հոս զայ, պիտի ուզէ դարձեալ մեկնիւ:

Լիրետ. — Ուզել. ատիկա հարցում չէ. բայց նայինք թէ պիտի կարենայ: Խշանի մը ծեռքի սեղմումը եւ գեղեցիկ կնոշ մը ժպտիւը: Ոչ մէկ Ուայզլինգ կարող է տեղիք չտալ: Կ'աճապարհի եւ ձեր չնորհը կը խնդրեմ:

Եպս. — Բարի՛ ճանապարհ:

Ատրլ. — Երթաք բարով: (Լիրետառակերթայ):

Եպս. — Մէյ որ հոս ըլլայ, ծեր վրայ կը փստահիմ:

Ատրլ. — Որպէս ոստղապատ ձնկ զործածել կ'ուզէք զիս:

Եպս. — Ոչ ...:

Ատրլ. — Որպէս երգակ:

Եպս. — Ոչ, ատիկա կը խաղայ Լիրետառակերթը: Կը խնդրեմ, մի մերժէք լնիւ ինծի այլն, զոր ոչ ոք կրնայ ինձ չնորհել:

Ատրլ. — Կը տեսնենք:

(Շարութակիլի)

«ԲԱԶՄԱՎԷՐ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՔՈՒԱԾ ԹԵՐՅԵՐ

1930-31-32

ԲՈԲՈԽ, շաբաթական զաւշամերթ, Ժ.Պ. տարի,

Haig Karakache, Téhéran (Perse).

ԲՈՒԺԱՆՔ, (գաղրած, տեսառողջ ԿԵՍՆՔ):

ԳԵՐԱՄԱՆԿ, հրկորհայ, Ե. տարի, Բ. թ. 587, Beyrouth (Liban).